

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ**

Հայկական մաթեմատիկական միությունը (ՀՄՄ) կամավոր գիտա-հասարակական կազմակերպություն է, որի նպատակն է օժանդակել Հայաստանի մաթեմատիկայի զարգացմանը, բնագիտության այլ ճյուղերում, կրթության, տնտեսության մեջ նրա նվաճումների ներդրմանը.

**ՀՄՄ կարգավիճակը և միջոցները:** ՀՄՄ իրավական անձ է և իրավունք ունի.

- ձեռք բերել և տնօրինել անհրաժեշտ գույքը, ներառյալ անշարժ;
- ունենալ հաշվարկային հաշիվ (և ընթացիկ հաշիվներ) բանկերում;
- հիմնել ձեռնարկություններ;
- հանդիսանալ որպես միջազգային հարաբերությունների մասնակից;
- իր շահերը պաշտպանել արբիտրաժում և դատարանում:

ՀՄՄ ունի կնիք, դրոշմակնիք և խորհրդանիշ, որը կազմված է երեք գույգ հինգթևանոց կապույտ աստղերից (մեծ ու փոքր), գույգերի թևերից երկուսը ունեն Մասիսի ուրվագծեր: ՀՄՄ ղեկավար մարմինները տեղակայվում են Երևանում: ՀՄՄ դրամական միջոցները կազմվում են.

- անդամավճարներից;
- հրատարակչական և տնտեսական գործունեության եկամուտներից;
- նվիրատվություններից և կտակներից:

Այդ միջոցները տնօրինվում են ՀՄՄ Խորհրդի կողմից կանոնադրական նպատակներով:

Հիմնական ծախսերի հաշվետվությունը պարբերաբար հրապարակվում է «Տեղեկաթերթ»-ում:

**ՀՄՄ գործունեությունը:** Իր աշխատանքը ՀՄՄ իրագործում է հետևյալ ուղղություններով.

- նպաստում է ՀՄՄ անդամների գիտական աշխատանքների կոորդինացմանը;
- մաթեմատիկական կենտրոնների հետ գիտական կապերի հաստատմանը;
- պարբերաբար կազմակերպում է նիստեր և սեմինարներ, որտեղ քննարկվում են նոր արդյունքներ, մաթեմատիկայի և հարակից գիտական ճյուղերի նվաճումներ;
- աշխատում է մաթեմատիկայի նվաճումների տարածման ուղղությամբ;
- հայտարարում է մրցույթներ, շնորհում մրցանակներ և պարգևներ;
- նպաստում է հանրապետության և Սփյուռքի հայաբնակ վայրերի մաթեմատիկական կրթության մակարդակի բարձրացմանը;
- նախաձեռնում և մասնակցում է մաթեմատիկական միջոցառումներին;
- զբաղվում է հրատարակչական և խմբագրական գործունեությամբ;
- նպաստում է տնտեսական ծրագրերի մաթեմատիկական հիմնավորմանը:

**ՀՄՄ կազմը:** ՀՄՄ անդամ կարող է լինել յուրաքանչյուր մաթեմատիկոս, որը ընդունում է ՀՄՄ Կանոնադրությունը և պատրաստ է մասնակցել ՀՄՄ խնդիրների լուծմանը: ՀՄՄ կարող է ունենալ նաև կոլեկտիվ անդամներ: ՀՄՄ անդամ կարելի է դառնալ անձնական դիմումի համաձայն, Խորհրդի կողմից հաստատելուց հետո: ՀՄՄ անդամները մուծում են անդամավճար, որի չափը հաստատում է հերթական Համաժողովը: Երկու տարուց ավելի անդամավճար չմուծող անդամները Խորհրդի որոշմամբ կարող են հեռացվել: ՀՄՄ անդամները կարող են դուրս գալ ՀՄՄ կազմից անձնական դիմումի համաձայն:

ՀՄՄ անդամները իրավունք ունեն.

- ընտրել և ընտրվել ՀՄՄ բոլոր մարմիններում;
- անվճար ստանալ ՀՄՄ տեղեկատու նյութեր;
- մասնակցել Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

ՀՄՄ անդամները ունեն միայն բարոյական պարտականություններ:

**ՀՄՄ կառուցվածքը:** ՀՄՄ գերագույն մարմինը Համաժողովն է, որը հրավիրվում է երեք տարին մեկ անգամ և քննարկում է ՄՄ կենսագործունեության հիմնական հարցերը: Համաժողովում նախատեսվում է.

--- կազմակերպական մաս (Նախագահի ու տարբեր մարմինների հաշվետվություններ, նոր ընտրություններ, կանոնադրական փոփոխություններ);

--- գիտական ծրագիր (գեկուցումներ, հաղորդումներ, սեմինարներ);

--- հանդիսավոր մաս (նոր Նախագահի ելույթը, պարզևների, մրցանակների հանձնում և այլն).

Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում ՀՄՄ գործունեությունը ղեկավարում է Համաժողովի կողմից երեք տարի ժամկետով ընտրված Խորհուրդը, որը.

--- նախապատրաստում է հերթական Համաժողովը;

--- ծրագրում է կազմակերպչական և գիտական նիստեր;

--- ընդունում և ազատում է ՀՄՄ անդամներին;

--- կարող է հրավիրել արտահերթ Համաժողով;

--- կարող է դնել Նախագահի անվստահության հարցը:

Վարչության նիստերը վարում է Նախագահը կամ փոխնախագահը: Խորհրդի նիստերի և օրակարգի մասին հայտարարվում է ոչ ուշ, քան երկու շաբաթ առաջ Խորհրդի կողմից հրատարակվող «Տեղեկաթերթ»ում:

Համաժողովի և որոշումների իրագործող մարմինը Վարչությունն է, որը ընտրվում է Խորհրդի կողմից երեք տարի ժամկետով: Նրա անդամներն են՝ Նախագահը, երկու փոխնախագահները, քարտուղարը, ատենապետը, Խորհրդի այլ անդամներ: Վարչությունը.

--- տնօրինում է ՀՄՄ ամբողջ գործունեությունը և գույքը;

--- կնքում է ՀՄՄ անունից համաձայնագրեր, պայմանագրեր, ակտեր;

--- կազմում է ՀՄՄ նախահաշիվներ և հաշվետվություններ:

ՀՄՄ Նախագահը ընտրվում է Համաժողովում երեք տարի ժամկետով երկու անգամից ոչ ավել, առանց անընդմեջ վերընտրվելու իրավունքի: Նախագահը Միության պաշտոնական ներկայացուցիչն է:

ՀՄՄ պաշտոնական գրագրությունը և տարբեր տեսակի պարտավորությունները ստորագրում է Նախագահը, իսկ ֆինանսական փաստաթղթերը՝ նաև ատենապետը: Որոշ դեպքերում Նախագահը կարող է վստահել իր պարտականությունների մի մասը փոխնախագահներից կամ Խորհրդի անդամներից մեկին:

Կնքված պայմանագրերից բխող բոլոր հետևանքների համար ՀՄՄ պատասխանում է իր ամբողջ գույքով: Վերջինիս պարտքերի համար ՀՄՄ անդամները պատասխանատու չեն:

ՀՄՄ վերահսկող մարմինը Վերստուգիչ հանձնախումբն է, որը ընտրվում է երեք տարով է Համաժողովի կողմից: Այն ընդգրկում է անձանց, որոնք չեն մտնում ՀՄՄ գործադիր մարմինների կազմի մեջ: Վերստուգիչ հանձնախումբը հաշվետու է միայն Համաժողովին:

**Որոշումների ընդունումը.** Ղեկավար մարմինների որոշումները իրավագորասու են ցուցակային կազմի 2/3-ի ներկայության դեպքում: Կանոնադրական փոփոխությունները կատարվում են ձայների 2/3-ով: Մյուս կարևոր որոշումները բոլոր մարմիններում ընդունվում են փակ քվեարկությամբ ներկա անդամների պարզ մեծամասնությամբ:

ՀՄՄ անդամների 1/6-րդ մասի գրավոր պահանջով երկու ամսվա ընթացքում հրավիրվում է արտահերթ Համաժողով:

**ՀՄՄ լուծարումը:** ՀՄՄ գործունեության դադարեցումը կատարվում է Համաժողովի կամ Հայաստանի գերագույն իշխանությունների որոշումներով, գործող օրենսդրության համաձայն: